ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՕԳՈՍՏՈՍԻ 2019թվականի N 21-Ա

ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 15-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի դրույթներով՝

Արջուտ համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Արջուտ համայնքի ավագանու 2019 թվականի օգոստոսի 15-ի նիստի օրակարգը՝

Օրակարգ՝

1,ՀՀ Լոռու մարզի Արջուտ համայնքի ղեկավարի վարձատրության չափը, աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

2,ՀՀ Լոռու մարզի Արջուտ համայնքի հողամասերի վարձակալության մրցույթի վերաբերյալ:

3,ՀՀ Լոռու մարզի Արջուտ համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 45-Ն որոշման հավելվածում լրացում կատարելու մասին:

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԴԱԼԼԱՔՅԱՆ ՎԱՉԳԵՆ

ՄԿՐՏՉՅԱՆ ՍԱԹԵՆԻԿ

ՇԱՀԻՆՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՕԳՈՍՏՈՍԻ 2019թվականի N 22-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ, ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 11-րդ և 28-րդ կետերով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով՝

Արջուտ համայնքի ավագանին որոշում է՝

1,Հաստատել Արջուտի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի.

2,Արջուտ համայնքի ղեկավարին՝ Արջուտի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կատարելու առաջարկությամբ մեկշաբաթյա ժամկետում սահմանված կարգով դիմել Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված պետական կառավարման մարմին:

3,ՈՒժը կորցրած ճանաչել Արջուտ համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 25-ի թիվ 19-Ա որոշումը:

4,Սույն որոշման 1-ին և 3-րդ կետերը ուժի մեջ են մտնում Արջուտի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կատարելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԴԱԼԼԱՔՅԱՆ ՎԱՉԳԵՆ

ՄԿՐՏՉՅԱՆ ՍԱԹԵՆԻԿ

ՇԱՀԻՆՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՕԳՈՍՏՈՍԻ 2019թվականի N 23-Ա

ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով՝

Արջուտ համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Արջուտ համայնքի ղեկավարի առաջարկած համայնքային սեփականություն հանդիսացող հողատեսքերի վարձակալության տրամադրման պայմանները՝

Լոտ 1- 118 հա արոտավայր, 06-019-102 ծածկագրից, 25 տարի ժամկետով, 1 հա-ի վարձավճարը՝ 800 դրամ մեկնարկային արժեքով:

Լոտ 2- 20 հա արոտավայր, 06-019 -101 ծածկագրից, 25 տարի ժամկետով, 1 հա-ի վարձավճարը՝ 800 դրամ մեկնարկային արժեքով:

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԴԱԼԼԱՔՅԱՆ ՎԱՉԳԵՆ

ՄԿՐՏՉՅԱՆ ՍԱԹԵՆԻԿ

ՇԱՀԻՆՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՕԳՈՍՏՈՍԻ 2019թվականի N 24-Ն

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 18,12,2018 ԹՎԱԿԱՆԻ <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԹԻՎ 45-Ն ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Արջուտ համայնքի ավագանին որոշում է՝

1,ՀՀ Լոռու մարզի Արջուտ համայնքի ավագանու 18,12,2018 թվականի <<Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արջուտ համայնքում 2019 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակները, դրույքաչափերը հաստատելու մասին>> թիվ 45-Ն որոշման հավելվածի <<Տեղական վճարներ>> բաժինը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր 12-րդ կետով

<<12/ համայնքի բնակիչների կողմից օգտագործվող ջրի սակագինը սահմանել 1 խմ -ի համար՝ 40 /քառասուն / դրամ:

2,Սույն որոշումն օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:

3,Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԴԱԼԼԱՔՅԱՆ ՎԱՉԳԵՆ

ՄԿՐՏՉՅԱՆ ՍԱԹԵՆԻԿ

ՇԱՀԻՆՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ

Հավելված

Արջուտ համայնքի ավագանու

2019 թվականի օգոստոսի 15-ի

Թիվ 22-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ, ԱՐՋՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Աշխատակիցների թվաքանակը՝ 7:

Հ/Հ	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ /սահմանվում է հաստիքային մեկ միավորի համար
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ			
1	Համայնքի ղեկավար	1	240000
2	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	180000
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ			
1	Աշխատակազմի քարտուղար	1	180000
2	Աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահ	1	178000
3	Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ	1	115000
4	Աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ	1	110000
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ			
1	Վարորդ	1	90000
	Ընդամենը	7	1093000

ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՄԿՐՏՉՅԱՆ